ԳԻՏԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՄԵԾ ՀԻՄՆԱԴԻՐԸ

(Կարլ Մարքսի ծննդյան 150-ամյակի առթիվ)

Ռ. Դ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Ա. Մ. ՈՍԿԱՆՅԱՆ

Սովետական ժողովուրդը, ողջ աշխարհի աշխատավորությունը նշում են խոշորագույն գիտնականի ու հեղափոխականի, համաշխարհային պրոլետարիատի ուսուցչի ու առաջնորդի՝ Կարլ Մարքսի ծննդյան 150-ամյակը։

Կարլ Մարքսը իր ամբողջ կյանքը նվիրեց համայն աշխարհի աշխատավորների շահերին ծառայելու մարդասիրական նպատակին։ Նրա կյանքը անձնազոհության փայլուն օրինակ է, անձնազոհության՝ հանուն աշխատանքի ազատագրման գաղափարի, որի իրականացման համար նա թե՛ տեսության, թե՛ պրակտիկայի բնագավառում մարտնչեց հետևողականորեն։

Մարքսը ծառայում էր ամենաբարձր հումանիզմի գաղափարներին, մարդուն մարդկայնացնելու գաղափարներին։ Դեռևս իր դոկտորական դիսերտացիայում նա գրում էր, որ փիլիսոփայական օրացույցի մեջ ամենաազնիվ դեմքը Պրոմեթևսն է։ Իր կյանքով ու գործունեությամբ Մարքսն ապացուցեց, որ ինքը այն նոր Պրոմեթևսն է, որը պատմությունից խլեց իմացության գաղտնիքները և տվեց նորագույն պատմության իսկական ստեղծարարին՝ համաշխարհային պրոլետարիատին։ Եվ աշխարհի հեղափոխական բանվոր դասակարգը անցած տասնամյակների իր պայքարով ու հաղթանակներով ապացուցեց դեպի մարդկության բարձրագույն նպատակները տանող՝ Մարքսի ցույց տված ճանապարհի ճշմարտացիությունը։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, մեր երկրում սոցիալիզմի հաղթանակը, համաշխարհային սոցիալիստական լագերի առաջացումը, կապիտալի աշխարհի բանվորական շարժման անշեղ աճը, ազգային-ազատագրական շարժումների աննախընթաց վերելքը գաղութային ու կիսագաղութային երկրներում՝ ահա թե որոնք են մարքսիստական տեսության ճշմարտացիության չափանիշներն ու նյութական մարմնավորումը։ Իսկ սոցիալիզմի համաշխարհային սիստեմի հետագա ամրապնդումն ու կոմունիզմի կառուցումը մեր երկրում՝ լավագույն հուշարձանը կլինեն աշխատավորական դանգվածների ազատագրման ուսմունքի մեծ հիմնադրին։

* * *

Կարլ Մարքսը ծնվել է Գերմանիայի Տրիր քաղաքում, 1818 թ. մայիսի 5-ին։ Գիմնազիան ավարտելուց հետո նա մտնում է համալսարան, սովորելով սկզբում Բոննում, իսկ հետո՝ Բեռլինում։ Ավարտելով իրավաբանական ֆակուլտետը և ստանալով փիլիսոփայության դոկտորի աստիճան, քսանամյա Մարքսը հույս ուներ պրոֆեսորական պաշտոն ստանալ Բոննում, սակայն Պրուսիայում թագավորող ռեակցիան ստիպեց նրան հրաժարվել համալսարանական կարիերայից։ 1842 թ. նրան հրավիրում են Քյոլն, որտեղ նույն տարվա

հոկտեմբերին Մարքսը դառնում է օպոզիցիոն տրամադրությունների արտահայտիչ «Հռենոսյան լրագրի» գլխավոր խմբագիրը։ Իր այս աշխատանքի ընթացքում Մարքսն ամեն օր գործ է ունենում աշխատավորների վիճակը բնորոշող բազմաթիվ փաստերի հետ, սկսում է խորը կերպով ուսումնասիրել աշխատավորների ազատագրման պրոբլեմը, որի շուրջ չի դադարեցնում իր պրոպագանդումներն ու հետազոտությունները ամբողջ կյանքի ընթացքում։

Բուրժուական կարգերի համարձակ քննադատությունը, որ ծավալում էր Մարքսը «Հռենոսյան լրագրի» էջերում, չէր կարող դուր գալ լրագրի տերերին ու կառավարությանը։ 1843 թ. հունվարին լրագիրը փակվում է, և Մարքսը նույն տարվա աշնանը տեղափոխվում է Փարիզ, որտեղ Ա. Ռուգեի հետ սկսում է հրատարակել «Գերմանա-ֆրանսիական տարեգիրքը»։ Այստեղ հրապարակած հոդվածներով Մարքսն սկսում է իր սոցիալիստական գաղափարների շարադրումը, անհաշտ հեղափոխական քննադատության ենթարկելով գոյություն ունեցող սոցիալական կարգերը. նա հանդես է գալիս պրոլետարիատի անունից և հավաստում, որ վերջինս որպես դասակարգ պատմության կողմից կոչված է «զենքի քննադատությամբ» խորտակել բուրժուազիայի թագավորությունը և կառուցել սոցիալիզմ։

1844 թ. սեպտեմբերին մի քանի օրով Փարիզ է գալիս Ֆրիդրիխ Էնգելսը։ Սկսվում է պրոլետարական հեղափոխության և մարքսիզմի տեսության երկու հանճարեղ հիմնադիրների ծանոթությունը, որը սկիզբ է դնում նրանց երկարատև անխախտ բարեկամությանն ու համատեղ գործունեությանը։

1845 թ. Մարքսը, որպես վտանգավոր հեղափոխական, պրուսական կառավարության պահանջով արտաքսվում է Փարիզից։ Փոխադրվելով Բրյուսել, նա ամբողջովին նվիրվում է տեսական ու գործնական հեղափոխական պայքարին։ Էնգելսի հետ Մարքսն այստեղ գրում է երկու մեծարժեք գործ՝ «Սուրբ ընտանիք, կամ քննադատական քննադատության քննադատություն. ընդդեմ Բրունո Բաուերի և ընկերության» (1845 թ.) և «Գերմանական գաղափարախոսությունը» (1845—46 թթ.), որոնց մեջ շարադրված են դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի և կոմունիզմի գիտական տեսության հիմունքները։ 1847 թ. նա գրում է Պրուդոնի մանրբուրժուական սոցիալիզմի և անարխիզմի դեմ ուղղված «Փիլիսոփայության թշվառությունը» աշխատությունը, որի մեջ առաջին անգամ արտահայտված են դիտական կոմունիզմի այնպիսի կարևորագույն գաղափարները, ինչպիսիք են պրոլետարական հեղափոխության ու պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունը և սոցիալիզմի հաղթանակի պատմական անխուսափելիությունը։

Էնգելսի հետ միասին Մարքսը 1847 թ. մտնում է «Կոմունիստների միություն» գաղտնի ընկերությունը և արմատապես վերակառուցում է վերջինիս ողջ աշխատանքը։ Այդ ընկերության II կոնգրեսում Մարքսն ու Էնգելսը հանձնարարություն են ստանում գրել ընկերության ծրագիրը։ Եվ ահա, 1848 թ. լույս է տեսնում «Կոմունիստական մանիֆեստը», ստեղծագործական մարքսիզմի այդ հանճարեղ երկը։ Նրանում իր հստակ ու պայծառ արտացոլումը գտավ նոր աշխարհայացքը՝ մատերիալիզմը, դիալեկտիկան, պատմության մատերիալիստական ըմբռնումը, դասակարգային պայքարի թեորիան, ուսմունքը պրոլետարիատի՝ որպես կապիտալիզմի գերեզմանափորի և կոմունիզմի կառուցողի համաշխարհային-պատմական դերի մասին։ Կոմունիստական շարժման համար այս աշխատության հսկայական նշանակության մասին հիա-

նալի է ասել Վ. Ի. Լենինը. «Այս փոքրիկ գրքույկն արժի ամբողջ հատորներ. նրա ոգով է ապրում ու շարժվում մինչև այժմ քաղաքակիրթ աշխարհի ամբողջ կազմակերպված ու մարտնչող պրոլետարիատը»[1]։

Մարքսիզմի այս ծրագրային փաստաթղթի հրապարակումից շատ չանցած, վրա հասավ 1848 թ. հեղափոխությունը, որ կանխագուշակված էր «Մանիֆեստ-



տիպ մեջ և որին պատրաստ դիմավորելու էր կոչում նա աշխատավորներին։ Սկսվելով Ֆրանսիայում, հեղափոխությունը արագորեն տեղափոխվեց Անգլիա և Գերմանիա։ Հեղափոխության օրերին Մարքսը սկզբում Փարիզում էր, ապա՝ Քյոլնում։ Այստեղ նա գլխավորեց հեղափոխական շարժումը, խմբագրելով «Նոր Հռենոսյան լրագիրը» և պաշտպանելով հեղափոխության ու ազատության շահերը՝ ընդդեմ ռեակցիոն ուժերի։

Հեղափոխության պարտությունից հետո Մարքսը կրկին ստիպված եղավ մեկնել Փարիզ, սակայն 1849 թ. հունիսի 13-ի հայտնի ցույցից ընդամենը մի քանի շաբաթ հետո ֆրանսիական կառավարությունը հարկադրեց նրան հե-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 2, էջ 12։

ռանալ Ֆրանսիայից։ Մարքսը մեկնեց Լոնդոն, որտեղ և ապրեց մինչև իր կյանքի վերջը։

Հաջորդ տասնամյակի ընթացքում, դեմոկրատական շարժումների աշխուժացման շնորհիվ, Մարքսը նորից է նետվում հեղափոխական պայքարի թատերաբեմ։ Բանվորական շարժումը XIX դարի 60-ական թթ. արդեն այնքան էր ամրապնդվել, որ հնարավոր էր դարձել իրականացնել Մարքսի վաղեմի նվիրական իդեան՝ ստեղծել բանվորների միջազգային կազմակերպություն, որը կոորդինացներ և ղեկավարեր սոցիալիստական շարժումը։ 1864 թ. սեպտեմբերի 28-ին Լոնդոնում, Սենտ-Մարտինս Հոլում կայացած բանվորական ժողովում Մարքսի առաջարկությամբ հիմնադրվեց Բանվորների միջազգային ընկերությունը՝ Ինտերնացիոնալը և ընտրվեց վերջինիս Գլխավոր խորհուրդը, որի հոգին Կարլ Մարքսն էր։ Ինտերնացիոնալի Գլխավոր խորհրդի բոլոր փաստաթղթերը, սկսած 1864 թ. նրա հիմնադիր մանիֆեստից մինչև 1871 թ. Փարիզյան Կոմունայի առթիվ հրապարակված մանիֆեստը, գրված են Մարքսի ձեռքով։

Այդ բոլոր տարիների ընթացքում Մարքսը լարված գործնական աշխատանքը զուգորդում է հսկայական տեսական գործունեությամբ։ Իր մի շարք փայլուն աշխատություններում («Դասակարգային պայքարը Ֆրանսիայում 1848—1850 թթ.», «Լուի Բոնապարտի բրյումերի 18-ը», «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում», «Գոթայի ծրագրի քննադատությունը» և այլն) նա վերլուծում և ընդհանրացնում է բանվոր դասակարգի հեղափոխական փորձը 1848—1850 թթ. և 1871 թ. հեղափոխությունների ընթացքում։ Միաժամանակ նա մեծագույն ուշադրություն է նվիրում տնտեսական կյանքի և տնտեսագիտական տեսությունների ուսումնասիրությանը։ Մարքսի տնտեսագիտական հետազոտությունների առաջին արդյունքը հանդիսացավ նրա «Քաղաքատնտեսության քննադատություն» երկը, որ լույս տեսավ 1859 թ., իսկ մի քանի տարի հետո, 1867 թ. հրատարակվեց Մարքսի մոնումենտալ գործի՝ «Կապիտալի» առաջին հատորը։ Համաշխարհային պրոլետարիատի հանճարեղ ուսուցչի այդ գլխավոր երկը բացահայտում է կապիտալիզմի զարգացման այն հիմնական օրենքները, որոնք նրան պատմական անխուսափելիությամբ տանում են դեպի մահ, մասնավորապես հավելյալ արժեքի օրենքը, որ իր մեջ կրում է կապիտալիստական շահագործման գաղտնիքը։ Սակայն «Կապիտալը» չի սահմանափակվում կապիտալիզմի տնտեսական քննադատությամբ. նրանում տրված է բուրժուական հասարակարգի սոցիալական հարաբերությունների ամբողջության լիակատար քննադատությունը, շարադրված է մարքսիզմի տեսությունը իր երեք բաղկացուցիչ մասերի՝ փիլիսոփայության, քաղաքատնտեսության և գիտական կոմունիզմի ամբողջության մեջ։

Մարքսի ուսմունքը, անշուշտ, չծագեց հանկարծակի, դատարկ տեղում, «համաշխարհային քաղաքակրթության զարգացման գլխավոր մայրուղուց մեկուսացած» (Լենին)։ Մարքսի հանճարի մեծությունը հենց այն է, գրում էր Լենինը, որ նա «պատասխան տվեց այն հարցերին, որ մարդկության առաջավոր միտքն արդեն առաջադրել էր»[2]։ Մարքսի ուսմունքը համաշխարհային տեսական մտքի երեք գլխավոր հոսանքների՝ գերմանական դասական փիլիսոփայության, անգլիական դասական քաղաքատնտեսության և XIX դարի ուտո-

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 3—4։

պիական սոցիալիզմի շարունակությունն է, զարգացումն ու ամբողջականացումը, դրանց սինթեզը բարձրագույն աստիճանում։

Մարքսիզմի ձևավորումից հետո անցած հարյուրամյակի ընթացքում ամբողջ աշխարհի աշխատավորների ձեռք բերած բոլոր հաղթանակները, մարդկության ողջ պրոգրեսը պարտական են Մարքսի ուսմունքին։ Նա է, որ լուսավորում է մարդկության ճանապարհը կապիտալիզմից դեպի սոցիալիզմ։ Մարքսի ուսմունքը հիրավի ամենահաղթ է, որովհետև ճշմարիտ է։ «Այն լրիվ է ու ներդաշնակ, տալով մարդկանց ամբողջական աշխարհայեցողություն, որը անհաշտելի է որևէ նախապաշարմունքի, որևէ ռեակցիայի, բուրժուական ճնշման որևէ պաշտպանության հետ»[3],— այսպես է բնորոշում Մարքսի ուսմունքը նրա հանճարեղ շարունակող Վ. Ի. Լենինը։

* * *

Կարլ Մարքսը հեղափոխական մեծագույն հեղաշրջում կատարեց փիլիսոփայության մեջ, Ֆ. Էնգելսի հետ միասին ստեղծելով դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը՝ բնության, մարդկային հասարակության և մտածողության զարգացման առավել ընդհանուր օրենքների մասին գիտությունը։ Այդ հեղաշրջման էությունը ամենից լավ արտահայտել է հենց ինքը՝ Մարքսը, Ֆոյերբախի մասին իր հանրահայտ թեզիսներում. «Փիլիսոփաները միայն տարբեր կերպով բացատրել են աշխարհը, բայց խնդիրն այն փոխելն է»[4]։ Մարքսիզմի հեղափոխական էությունը հենց աշխարհը վերափոխելու կոչման մեջ է։

Մինչմարքսյան փիլիսոփայությունը անկարող էր աշխարհը վերափոխելու համար պիտանի միջոց լինել։ Մատերիալիզմն այդ ժամանակ հիմնականում մեխանիստական էր, մետաֆիզիկական ու հայեցողական, հեռու էր հեղափոխական պրակտիկայի նշանակությունը ըմբռնելուց։ Անհրաժեշտ էր հաղթահարել մատերիալիզմի այդ սահմանափակությունները։ Անհրաժեշտ էր զարգացնել մատերիալիզմը՝ պրոլետարիատի հեղափոխական պայքարի և գիտության նվաճումների հիման վրա։ Անհրաժեշտ էր հարստացնել մատերիալիզմը գերմանական դասական փիլիսոփայության մեծագույն նվաճումը հանդիսացող դիալեկտիկայով։ Սակայն դիալեկտիկան իր այն ձևով, որ նրան տվել էր Հեգելը, անընդունելի էր։ Հեգելի դիալեկտիկան իդեալիստական մեթոդ էր, նա արտահայտում էր ոչ թե օբյեկտիվ նյութական աշխարհի, այլ բնությունից ու մարդուց անկախ իդեայի զարգացումը։ «Դիալեկտիկան Հեգելի մոտ,— գրում էր Մարքսը,— գլխիվայր է կանգնած։ Պետք է այն գլխիվեր շուռ տալ՝ միստիկական կեղևի տակ թաքնված ռացիոնալ միջուկը երևան հանելու համար»[5]։ Հենց այդ էր, որ կատարեց Մարքսը, ստեղծելով մատերիալիստական դիալեկտիկան։ Այսպիսով մատերիալիզմը միացվեց դիալեկտիկային, իսկ դիալեկտիկան դրվեց մատերիալիստական հիմքի վրա։ Ծնվեց դիալեկտիկական մատերիալիզմը։ Դրանով իսկ ապացուցվեց ոչ միայն բնության օբյեկտիվ, որևէ իդեայից անկախ գոյությունը, ոչ միայն մատերիայի, գոյի, բնության առաջ-

3 Նույն տեղում, էջ 4։

4 Ֆ. Էնգելս, Լյուդվիգ Ֆոյերբախը և գերմանական կլասիկ փիլիսոփայության վախճանը, Երևան, 1961, էջ 111։

5 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 1, Երևան, 1933, էջ XXXI։

նայնությունը և գիտակցության, իդեայի, մտածողության երկրորդայնությունը, այլև ողջ աշխարհը հառնեց որպես հավերժ զարգացող ու փոփոխվող կեցություն, որի շարժումն ու զարգացումը հետևանք են նյութական աշխարհին հատուկ ներքին հակասությունների պայքարի։

Դիալեկտիկա-մատերիալիստական կոնցեպցիան հանդիսացավ ամենաբաղմակողմանի, բովանդակությամբ ամենահարուստ, խորը և ճշմարիտ գիտական ուսմունքը զարգացման մասին։ Ի տարբերություն մետաֆիզիկական կոնցեպցիայի, որի համար զարգացումը նշանակում է միայն մեծացում կամ փոքրացում, մատերիալիստական դիալեկտիկան զարգացումը դիտում է, որպես հակասությունների միասնություն (միասնականի երկատում՝ փոխադարձաբար միմյանց ժխտող հակասությունների և նրանց փոխհարաբերություն)։ Մետաֆիզիկան բնականաբար և անխուսափելիորեն ստիպված էր դիմել աշխարհը շարժման մեջ դնող գերբնական, աստվածային ուժին։ Միայն մատերիալիստական դիալեկտիկան է, որ շարժման ու զարգացման աղբյուրը որոնում ու գտնում է հենց իրեն՝ մատերիայի մեջ, շարժումը համարելով ողջ կեցության ինքնաշարժում, իսկ զարգացումը՝ քանակական ու որակական փոփոխությունների միասնություն, որն արտահայտվում է աստիճանականության ընդհատումներով, հնից դեպի նորը կատարվող դիալեկտիկական թռիչքներով, հակասության վերածվելու միջոցով, հնի ոչնչացմամբ և նորի առաջանալով, պարուրաձև զարգացման, բացասման բացասման միջոցով։

Մատերիալիստական դիալեկտիկան ոչ միայն կոնցեպցիա է աշխարհի զարգացման մասին, այլև իմացության մեթոդ, մարդկային գիտակցության կողմից աշխարհն արտացոլելու լոգիկա։ Օբյեկտիվ նյութական աշխարհի դիալեկտիկան արտացոլվում է մարդու հասկացությունների դիալեկտիկայում, այլ կերպ ասած՝ մեր մտածողության հասկացությունների դիալեկտիկան հետևանք է օբյեկտիվ աշխարհի դիալեկտիկական շարժման և հանդիսանում է նրա նմանակը (անալոգը)։

Մարքսի ու Էնգելսի հանճարով ստեղծված մատերիալիստական դիալեկտիկան, ինչպես ինքը՝ Մարքսն էր ասում, «բուրժուազիային ու նրա դոկտրինյոր առաջնորդներին զայրույթ ու սարսափ է ազդում, որովհետև իրականության պոզիտիվ ըմբռնման մեջ նա միաժամանակ մտցնում է իրականության բացասման, նրա անհրաժեշտ կործանման ըմբռնումն էլ, ամեն մի իրականացած ձև նա ըմբռնում է հոսանուտ շարժման մեջ, ուրեմն նաև քննում է նրա անցողական կողմից, ոչ մի բանի առջև ծնկի չի իջնում, իր էությամբ քննադատող ու հեղափոխական է»[6]։

Մարքսիստական մատերիալիզմը ժխտեց ոչ միայն իդեալիզմն ու մետաֆիզիկական մատերիալիզմը, այլև ամեն կարգի սկեպտիցիզմն ու ագնոստիցիզմը, մասնավորապես՝ Յումի ու Կանտի ագնոստիցիզմը։ Մարքսը հրաժարեց մարդկային իմացության անժխտելի «այսկողմնայնությունը», աշխարհի ճանաչելիությունը, ապացուցեց կանտյան իբր անճանաչելի «ինքնին իրի» բովանդակաղուրկ լինելը։ Նա ցույց տվեց, որ անճանաչելի իրեր չկան, այլ կան միայն դեռևս չճանաչված իրեր։ Մարքսիզմի այս եզրահանգումը ոչ պակաս հեղափոխիչ նշանակություն ունի, քան նրա մնացած դրույթները։

---

6 Նույն տեղում։

Բայց այն ամենը, ինչ ընդհանրապես ճշմարիտ է բնության և գիտակցության վերաբերյալ, պետք է որ ճշմարիտ լինի նաև մարդկային հասարակության, այն է՝ հասարակական կեցության և հասարակական գիտակցության վերաբերյալ։ Հին մատերիալիզմը այնպես էլ չկարողացավ հասնել այս եզրահանգմանը, նա հիմնականում մնաց այն տեսակետի վրա, թե «կարծիքներն են ղեկավարում աշխարհը»։ Պատմության օրինաչափությունների օբյեկտիվությունը, պատմական մեկ դարաշրջանից մյուսին անցնելու օրինաչափությունները, հասարակական երևույթների ու հասարակության զարգացման նյութական հիմքը անհայտ էին հին մատերիալիզմին։ Աշխարհը վերափոխելու փիլիսոփայություն ստեղծող Մարքսի առաջ կանգնած էր մի դժվարագույն և իր բարդությամբ նախորդ ողջ փիլիսոփայության համար անլուծելի խնդիր։ Էնգելսը այդ առթիվ գրում է. «Խնդիրն այն էր, որ համաձայնեցվեր հասարակության մասին եղած գիտությունը... մատերիալիստական հիմքի հետ և գիտությունը վերակառուցվեր համապատասխան այդ հիմքի»[7]։

Դիալեկտիկական մատերիալիզմը տարածելով մարդկային հասարակության զարգացման վրա, Մարքսը ստեղծեց պատմական մատերիալիզմը կամ պատմության մատերիալիստական ըմբռնումը։ Ինչպես գրում էր Լենինը, դա հանդիսացավ «գիտական մտքի մեծագույն նվաճումը»[8]։ Մարքսն ապացուցեց, որ ամեն մի հասարակարգի գոյության ու զարգացման հիմքը հանդիսանում է նյութական բարիքների արտադրությունն ու փոխանակումը, որ յուրաքանչյուր հասարակության պատմական տիպը բնորոշվում է նյութական բարիքների արտադրությունից ու փոխանակությունից բխող բաշխմամբ, որից էլ հենց կախված է տվյալ հասարակության բաժանումը դասակարգերի ու դասերի։ Հետևապես հասարակության զարգացման և սոցիալ-քաղաքական հեղաշրջումների հիմնական պատճառները պետք է որոնել ո՛չ թե մարդկանց գիտակցության մեջ, ո՛չ թե այս կամ այն թեորիայի ու իդեայի, ո՛չ թե ինչ-որ հավերժական ճշմարտությունների կամ հավերժական արդարության, այլ այն փոփոխությունների մեջ, որ կատարվում են արտադրաեղանակում և նյութական բարիքների փոխանակման բնագավառում, այդ պատճառները «պետք է փնտրել... ոչ թե փիլիսոփայության, այլ համապատասխան էպոխայի էկոնոմիայի մեջ»[9]։

Մարքսն ապացուցեց, որ մարդկային հասարակության ողջ պատմությունը, բացառությամբ նախնադարյան համայնական կարգերի, եղել է իրենց նյութական շահերի համար դասակարգերի մղած պայքարի պատմություն, իսկ ամեն մի դասակարգ յուրաքանչյուր տվյալ դարաշրջանում հանդիսացել է ու հանդիսանում է այդ դարաշրջանի տնտեսական, արտադրական հարաբերությունների արդյունք, ըստ որում վերջիններս իրենց հերթին որոշվում են արտադրողական ուժերի զարգացման մակարդակով։ Մարքսն ապացուցեց, որ «այդ արտադրական հարաբերությունների ամբողջությունը կազմում է հասարակության տնտեսական ստրուկտուրան, այն իրական բազիսը, որի վրա բարձրանում է իրավական ու քաղաքական վերնաշենքը և որին համապատաս-

---

7 Ֆ. Էնգելս, Լյուդվիգ Ֆոյերբախը և գերմանական կլասիկ փիլիսոփայության վախճանը, էջ 43—44։

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 5։

9 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հատ. II, Երևան, 1950, էջ 166։

խանում են հասարակական գիտակցության որոշ ձևերը»[10]։ Հանրագումարի բերելով հասարակության զարգացման իր մատերիալիստական ուսմունքը, Մարքսը գրում է. «Ո՛չ թե մարդկանց գիտակցությունն է որոշում նրանց կեցությունը, այլ, ընդհակառակը, նրանց հասարակական կեցությունն է որոշում նրանց գիտակցությունը»[11]։

Այսպիսով, ի դեմս հասարակության տնտեսական ստրուկտուրայի Մարքսը հայտնաբերեց հասարակական կյանքի այն հիմնական գործոնը, որով որոշվում են ողջ սոցիալ-քաղաքական կառուցվածքն ու գաղափարախոսությունը։ Միաժամանակ նա առանձնացրեց այն հիմնական պատմական հասարակական-տնտեսական ֆորմացիաները, որոնցից ամեն մեկի համար բնորոշ ու յուրահատուկ են որոշակի տնտեսական, արտադրական հարաբերություններ։

Արտադրահարաբերությունների յուրաքանչյուր պատմական տիպ համապատասխանում է տվյալ պատմական դարաշրջանում գոյություն ունեցող արտադրողական ուժերին։ Սակայն արտադրողական ուժերը, օբյեկտիվ անհրաժեշտությամբ, մշտապես զարգանում են։ Առանց այդ զարգացման հասարակության կյանքը անհնար է։ Միևնույն ժամանակ, արտադրահարաբերությունները, այսինքն հասարակության տնտեսական կառուցվածքը, նույնպիսի օբյեկտիվ անհրաժեշտությամբ, պետք է քիչ թե շատ երկարատև ժամանակաշրջանի ընթացքում միևնույն ձևն ունենան, լինեն կայուն, քանի որ հակառակ դեպքում արտադրաեղանակը կկորցնի իր տնտեսական ամբողջականությունը, կդառնա ամորֆ ու կդադարի գոյություն ունենալուց։ Հարատև զարգացող ու փոփոխվող արտադրողական ուժերի բացարձակ հեղափոխականությունը և անհրաժեշտաբար իրենց տվյալ կառուցվածքը պահպանող արտադրահարաբերությունների հարաբերականորեն պահպանողական լինելը օբյեկտիվ անխուսափելիությամբ ժամանակի ընթացքում հանգեցնում են այն բանին, որ անհամապատասխանություն, հակասություն և կոնֆլիկտ է ստեղծվում արտադրողական նոր ուժերի և հնացած արտադրահարաբերությունների միջև։ Դադարելով արտադրողական ուժերի զարգացման ձևը լինելուց, արտադրահարաբերությունները դառնում են այդ զարգացումն արգելակող շղթաներ։ Հենց այդ ժամանակ էլ սկսվում է սոցիալական հեղափոխության դարաշրջանը. հին արտադրահարաբերությունները ոչնչացվում են և փոխարինվում նորով, որը համապատասխանում է արտադրողական ուժերի զարգացման նոր մակարդակին։ Այսպես, բնական ու պատմական անհրաժեշտությամբ, օրինաչափ կերպով կատարվում է հեղափոխական անցումը արտադրահարաբերությունների մի տիպից մյուսին, այսինքն՝ հասարակական-տնտեսական մի ֆորմացիան տեղի է տալիս հաջորդ, ավելի բարձր ֆորմացիային։

Մարքսի ու Էնգելսի այս բոլոր հայտնագործությունների շնորհիվ, ինչպես նշում էր Լենինը, «պատմության ու քաղաքականության մասին գոյություն ունեցող հայացքներում մինչև այդ տիրող քաոսն ու կամայականությունը փոխարինվեցին զարմանալի ամբողջական և ներդաշնակ գիտական թեորիայով, որը ցույց է տալիս, թե ինչպես հասարակական կյանքի մի կացութաձևից, արտադրողական ուժերի աճման հետևանքով, զարգանում է մյուսը, ավելի բարձ-

10 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հատ. I, Երևան, 1950, էջ 327։
11 Նույն տեղում։

ը»[12]։ «Կարլ Մարքս» աշխատության մեջ շարունակելով պատմական մատերիալիզմի բնորոշումը, Լենինը գրում էր. «Մարքսիզմը մատնանշեց հասարակական-տնտեսական ֆորմացիաների ծագման, զարգացման և անկման պրոցեսի համապարփակ, ամենակողմանի ուսումնասիրության ուղին, քննելով բոլոր հակասական տենդենցների ամբողջությունը, հանգեցնելով դրանք հասարակության տարբեր դասակարգերի կյանքի և արտադրության ճիշտ որոշելի պայմաններին, վերացնելով սուբյեկտիվիզմն ու կամայականությունն առանձին «գլխավոր» իդեաների ընտրության կամ նրանց մեկնաբանման մեջ, բացահայտելով անխտիր բոլոր իդեաների և բոլոր տարբեր տենդենցների արմատները նյութական արտադրողական ուժերի կացության մեջ»[13]։

Պատմական մատերիալիզմի կարևորագույն նվաճումը հանդիսացավ այն, որ, ինչպես նշված է Մարքսի ծննդյան 150-ամյակի առթիվ ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի թեզիսներում, «Մարքսը հիմնավորեց ժողովրդական զանգվածների վճռական դերը պատմության մեջ և այդ դերի մեծացումը հասարակական զարգացման ընթացքում։ Ընդունելով պատմական պրոցեսի օբյեկտիվ բնույթը. մարքսիզմը մեծ գեր է հատկացնում մարդկային գիտակցական գործունեությանը, հսկայական նշանակություն է տալիս հեղափոխական տեսությանը»[14]։

Պատմական մատերիալիզմի հայտնագործմամբ ընդհանուր-տեսական, մեթոդոլոգիական հիմք ստեղծվեց պրոլետարիատի հեղափոխական ուսմունքի՝ գիտական կոմունիզմի տեսության համար։

* * *

Պատմական մատերիալիզմը հիմնավորեց կապիտալիստական հասարակական-տնտեսական ֆորմացիայից կոմունիստականին անցնելու պատմական անխուսափելիությունը։ Սակայն որպեսզի այդ օրինաչափությունը դառնար պրոլետարիատի հեղափոխական գործունեության թեորիայի ու ծրագրի հիմք, անհրաժեշտ էր այն հագեցնել կապիտալիստական արտադրաեղանակի զարգացման յուրահատուկ այն օրենքների կոնկրետ բովանդակությամբ, որոնք տանում են դեպի այդ արտադրաեղանակի քայքայումն ու կործանումը։ Հենց այս գիտական սխրագործությունը կատարեց Մարքսը՝ ստեղծելով իր մատերիալիստական ֆաղսֆատնտեսությունը։

Կապիտալիզմի զարգացումը անխուսափելիորեն դեպի սոցիալիզմ է տանում ոչ թե այն պատճառով, որ այդ են ցանկանում պրոլետարիատն ու իր գաղափարախոսները և այդ է պնդում փիլիսոփայությունը, այլ այն պատճառով, որ կապիտալիզմի զարդացման տնտեսական օբյեկտիվ օրենքները անհաղթահարելիորեն թելադրում են անցումը կապիտալիզմից դեպի սոցիալիզմ։ «Այս աշխատության վերջին նպատակն է,— գրում էր Մարքսը «Կապիտալ» առաջաբանում,— արդի հասարակության տնտեսական զարդացման օրենքը հայտնագործել»[15]։ Հենց այդ վերջնական նպատակին հասնելու շնորհիվ Մարքսը կարողացավ իր հեղափոխիչ եզրակացությունները խարսխել տնտեսական այն-

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 5։
13 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 57։
14 Տե՛ս «Սովետական Հայաստան», 9 ապրիլի 1968 թ.։
15 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ XXII։

պիսի անխախտ օրինաչափությունների վրա, որոնք գործում են բնական օրինաչափությունների ուժգնությամբ։

Կապիտալիստական հասարակարգում իշխում է ապրանքների արտադրությունը, որի նպատակը կապիտալի աճն է։ Բայց ամեն մի ապրանք իր արժեքն ունի, որն ինքն իրեն չի կարող մեծանալ։ Հարց է ծագում. ինչպե՞ս է առաջանում այն նոր, լրացուցիչ արժեքը, որը ավելանում է կապիտալը կազմող նախնական արժեքների գումարին։ Այս լրացուցիչ կամ հավելյալ արժեքը առաջանում է այն յուրահատուկ ապրանքի արտադրողական սպառման պրոցեսում, որը միշտ էլ առատորեն ճարվում է շուկայում։ Այդ ապրանքը բանվորական ուժն է։

Բբրև ապրանք բանվորական ուժը (աշխատուժը) առկա է ի դեմս կենդանի բանվորի, որի գոյությունն ու գործառնումը արտադրության մեջ պայմանավորված են նրա ապրելու և աշխատուժը վերարտադրելու համար անհրաժեշտ կենսապայմանների գումարով։ Այդ գումարն էլ հենց հանդիսանում է աշխատուժի արժեքը։ Բայց ոչ լրիվ արժեքը. դրան ավելանում է, և այն կենսապայմանների գումարը, որ անհրաժեշտ են բանվորի ընտանիքը պահելու համար։

Ամեն մի ապրանքի արժեքը որոշվում է նրա արտադրության վրա ծախսված ժամանակով։ Այն ժամանակը, որ ծախսվում է բանվորի ու նրա ընտանիքի համար անհրաժեշտ այնպիսի կենսամիջոցներ արտադրելու նպատակով. որոնք ապահովեն բանվորի աշխատուժի արդյունավետ օգտագործումը, որոշում է աշխատուժի արժեքը։ Գնելով բանվորի աշխատուժը, կապիտալիստը օգտագործում է այն՝ որոշակի ժամանակամիջոցում որոշ տեսակի ապրանքներ արտադրելու համար, ըստ որում այդ ժամանակամիջոցի տևողությունը միշտ էլ նշվում է երկու կողմերի միջև կնքվող պայմանագրում։ Ենթադրենք. թե դա մեկ շաբաթ է։ Այդ դեպքում բանվորը, որպես կանոն, շաբաթվա առաջին 3—4 օրվա ընթացքում արտադրում է այնքան արժեքներ, որքան նրան կապիտալիստը վճարում է որպես իր աշխատուժի շաբաթական արժեքը։ Բայց բանվորն իր աշխատուժը, կապիտալիստի հետ կնքած պայմանի համաձայն, ծախսում է ոչ թե 3—4 օր, այլ ողջ շաբաթվա ընթացքում։

Այսպիսով, բանվորի աշխատաժամանակը բաժանվում է անհրաժեշտ և հավելյալ, վարձատրվող և չվարձատրվող մասերի, իսկ նրա աշխատանքը՝ անհրաժեշտ աշխատանքի և հավելյալ աշխատանքի։ Այն արժեքները. որ ստեղծվում են հավելյալ աշխատաժամանակի ընթացքում, հանդիսանալով հավելյալ աշխատանքի արդյունք, կազմում են հավելյալ արժեքը։ Ազատ բանվորական ուժի ազատ առուծախի հիման վրա իրականացվող հավելյալ արժեքի արտադրությունն էլ հենց կազմում է շահագործման կապիտալիստական ձևի և կապիտալիստական արտադրանքների շարժման դաղտնիքը։ Կապիտալիստական արտադրությունը աշխատանքի այնպիսի պրոցես է, որի ընթացքում արժեքի գումարը մեծանում է, շնորհիվ այն հանգամանքի, որ աշխատանքի պրոցեսը ավելի երկար է տևում, քան աշխատուժի արժեքը վճարելու համար անհրաժեշտ ապրանքային էկվիվալենտ արտադրելու ժամանակամիջոցը։ Այսպիսով, կապիտալիստական ապրանքային արտադրությունը ոչ թե արժեքի արտադրության պարզ պրոցես է, այլ արժեքի մեծացման պրոցես։

Բնական է, որ կապիտալիստը ձգտում է մեծացնել հավելյալ աշխատաժամանակի տևողությունը, բարձրացնել արժեքի մեծացման աստիճանը։ Սկզբում այդ հնարավոր է լինում իրականացնել աշխատանքային օրվա երկա-

բացման միջոցով։ Նույնքան էլ բնական է, որ բանվորը ձգտում է կրճատել հավելյալ աշխատաժամանակը, աշխատանքային օրվա տևողությունը։ Այստեղից է ծագում կապիտալիստների դեմ բանվոր դասակարգի անընդհատ ու հետզհետե սրվող պայքարը՝ հանուն աշխատանքի պայմանների բարելավման։ Աշխատանքային օրվա երկարացումը ունի նաև իր բնական սահմանները, քանի որ բանվորը չի կարող աշխատել օրվա մեջ 24 ժամ։ Այս ամենը ստիպում է կապիտալիստներին որոնել այլ միջոցներ, որոնք հնարավորություն տային մեծացնել հավելյալ աշխատաժամանակի, հավելյալ աշխատանքի բաժինը արտադրության պրոցեսում։ Դա հնարավոր է դառնում աշխատանքի ինտենսիվացման, նրա արտադրողականության բարձրացման միջոցով, որն իր հերթին ձեռք է բերվում տեխնիկական առաջադիմության, աշխատանքի կազմակերպումը բարելավելու, բանվորական ուժի որակը բարձրացնելու, մի խոսքով՝ արտադրողական ուժերի զարգացման շնորհիվ։

Այսպիսով, արտադրողական ուժերի անընդհատ ու հետզհետե արագացող զարգացումը դառնում է կապիտալիզմի գոյության և զարգացման անխուսափելի օրենքը։ Այդ զարգացումն անցնում է երեք խոշոր փուլեր՝ կոոպերացման, աշխատանքի բաժանման ու մանուֆակտուրայի և, վերջապես, մեքենայական արտադրության։ Մեքենայական արտադրությունն ընդլայնելու և հավելյալ արժեքի արտադրությունը մեծացնելու համար կապիտալիստների միջև մղվող պայքարի իմանենտ օրենքները ստեղծում են կապիտալիստական կուտակման պատմական տենդենցը, որն օբյեկտիվորեն ու հրամայաբար որոշում է կապիտալիստական արտադրաեղանակի բախտը։

Այդ տենդենցի էությունը տեսական մեծագույն խորությամբ ու հստակությամբ Մարքսը շարադրել է «Կապիտալի» I հատորի հռչակավոր XXIV գլխում։ Նա ցույց է տվել, որ կապիտալիզմի ծագումը հնարավոր էր միայն անհատ արտադրողին՝ արհեստավորին և գյուղացուն իր մասնավոր սեփականությունից զրկելու շնորհիվ։ Կապիտալիզմի զարգացումը կյանքի է կոչում արդեն ուրիշ տիպի ունեզրկման անհրաժեշտությունը։ «Հիմա,— գրում է Մարքսը,— պետք է ունեզրկվի այլևս ոչ թե ինքնակա տնտեսություն վարող գործավորը, այլ բազմաթիվ բանվորներին շահագործող կապիտալիստը։ Այդ ունեզրկումը կատարվում է բուն իսկ կապիտալիստական արտադրության ներհատուկ օրենքների ներգործությամբ, կապիտալների կենտրոնացմամբ։ Մի կապիտալիստը զարկում, սպանում է շատերին։ Այս կենտրոնացման կամ թե բազմաթիվ կապիտալիստների՝ սակավաթիվ կապիտալիստների կողմից ունեզրկվելու հետ զուգընթաց զարգանում է աշխատանքի պրոցեսի կոոպերատիվ ձևը հարաճուն մասշտաբով, գիտության գիտակցական տեխնիկական կիրառումը, հողի պլանաչափ շահագործումը, աշխատամիջոցների միմիայն միասնորեն գործադրելի աշխատամիջոցներ դառնալը, բոլոր արտադրամիջոցների տնտեսումն այն բանի շնորհիվ, որ նրանք գործածվում են իբրև համակցված, հասարակական աշխատանքի արտադրամիջոցներ, բոլոր ժողովուրդների՝ համաշխարհային շուկայի ցանցի մեջ քաշվել-ընկնելը և սրանով էլ կապիտալիստական ռեժիմի միջազգային բնույթը։ Կապիտալի մագնատների մշտապես նվազող թվի հետ, մագնատներ, որոնք բռնատիրում են և մենաշնորհացնում փոխակերպման այս պրոցեսի բոլոր օգուտները, աճում է թշվառության, ճընշման, ստրկացման, այլասերման, շահագործման քանակը, բայց և աճում է վրդովմունքն էլ բանվոր դասակարգի, որը մշտապես բաղմանում և կրթվում,

միանում ու կազմակերպվում է բուն իսկ արտադրության կապիտալիստական պրոցեսի մեխանիզմի միջոցով։ Կապիտալի մենաշնորհը կապանք է դառնում արտադրության այն եղանակի համար, որը փթթել է նրա հետ ու նրա շնորհիվ։ Արտադրամիջոցների կենտրոնացումն ու աշխատանքի հանրայնացումը հասնում են մի կետի, երբ նրանք անհամատեղելի են դառնում իրենց կապիտալիստական պատյանի հետ։ Սա պայթում է։ Հնչում է կապիտալիստական մասնավոր սեփականության ժամը։ Ունեզրկողներն ունեզրկվում են»[16]։

* * *

Ունեզրկողների այս ունեզրկման ուղիները, ձևերն ու մեթոդները մշակում է պրոլետարիատը՝ իր հեղափոխական-պրակտիկ գործունեության ընթացքում։ Այդ գործունեության թեորիան, որ ստեղծեց Մարքսը՝ ամփոփելով պրոլետարիատի պայքարի ողջ փորձը, հանդիսանում է հենց գիտական կոմունիզմի տեսությունը։

Գիտական կոմունիզմի առաջին կարևորագույն դրույթը հանդիսացավ Մարքսի եզրակացությունը պրոլետարիատի՝ որպես նոր հասարակարգ ստեղծողի դերի համաշխարհային-պատմական նշանակության մասին։ «Հեգելի իրավունքի փիլիսոփայության քննադատության շուրջը» աշխատության մեջ Մարքսը հիմնավորեց արմատական սոցիալական հեղափոխության գաղափարը, հեղափոխություն, որը կարող է տեղի ունենալ միայն որպես հետևանք պրոլետարիատի դասակարգային պայքարի։ «Քննադատության զենքը,— գրում է նա,— իհարկե, չի կարող փոխարինել զենքով քննադատելուն, նյութական ուժը պետք է խորտակվի հենց նյութական ուժով»[17]։ Այդ նյութական ուժը պրոլետարիատն է։ Ազատագրելով իրեն, պրոլետարիատը ոչնչացնում է իրեն՝ որպես դասակարգ և դրանով իսկ ոչնչացնում է դասակարգերն՝ ընդհանրապես, քանի որ ինքը որպես դասակարգ գոյություն ունի միայն իրեն ճնշող դասակարգի գոյության շնորհիվ։

Իր մի այլ աշխատության մեջ («Հրեական հարցը») Մարքսը տալիս է «սոցիալիստական հասարակարգի փիլիսոփայական ուրվագիծը», բացահայտելով բուրժուական արտադրահարաբերությունների վերացման շնորհիվ ձեռք բերվող ազատագրության էությունը։

Այս երկու աշխատություններում, որ գրված են 1844 թ., մարդկության ազատագրումը Մարքսը դեռևս չի բխեցնում տնտեսական անհրաժեշտությունից։

Գիտական կոմունիզմի տեսության մշակումը Մարքսը շարունակեց իր հաջորդ տարիների աշխատություններում՝ «Սուրբ ընտանիքում» և «Գերմանական գաղափարախոսությունը» գրքում։ Ֆ. Էնգելսի հետ համատեղ գրած այս վերջին աշխատության մեջ պրոլետարական գաղափարախոսությունը արդեն հանդես է գալիս «գիտական կոմունիզմ» անվան տակ (մինչդեռ «Սուրբ ընտանիքում» այն կոչված է «ռեալ հումանիզմ»)։ Այստեղ առաջին անգամ Մարքսն ու Էնգելսը կոմունիզմը բխեցնում են արտադրողական ուժերի և արտադրահարաբերությունների հակասությունից, դրանով իսկ ստեղծելով իրենց ուսմունքը հասարակության կոմունիստական վերափոխման օբյեկտիվ հիմ-

16 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 374—375։

17 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. I, էջ 422։

քի մասին։ Նույնպես առաջին անգամ այս գրքում է, որ նրա հեղինակները գիտականորեն մշակում ու բացահայտում են հեղափոխության հասկացությունը, ձևակերպում կոմունիստական, այսինքն՝ պրոլետարական հեղափոխության իրենց ըմբռնումը, մի հեղափոխություն, որը ոչ թե ժխտում է քաղաքական հեղաշրջումը (այսինքն՝ քաղաքական գերիշխանության հասնելը), այլ համարում է այն սոցիալական հեղափոխության հիմք ու նախապայման։ Մարքսն ու Էնգելսը այս գրքում մշակում են պրոլետարական հեղափոխության և կոմունիզմի հաղթանակի պայմանների մասին իրենց ուսմունքը, հեղափոխությունը համարելով հետևանք արտադրողական ուժերի և «շփման ձևերի», այսինքն՝ արտադրահարաբերությունների միջև եղած հակասության[18]։ «Գերմանական գաղափարախոսության» մեջ կոմունիզմի մասին ողջ ուսմունքը ստանում է ոչ միայն փիլիսոփայական և սոցիալ-քաղաքական հիմնավորում, այլև տնտեսական։ «Կոմունիզմի կառուցումը ըստ էության տնտեսական բնույթ ունի,— գրում են Մարքսն ու Էնգելսը,— դա հանգում է տվյալ հասարակության նյութական պայմանների ստեղծմանը»[19]։ Այս եզրակացությունը բոլորովին նոր խոսք էր գիտական կոմունիզմի մշակման պատմության մեջ։

Ինչպես հայտնի է, «Գերմանական գաղափարախոսությունը» նրա հեղինակների կենդանության օրոք չհրատարակվեց։ Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ 1847 թ. «Փիլիսոփայության թշվառությունը» գրքի հրատարակմամբ երևան եկան արդեն միանգամայն հասուն, լիովին ձևավորված գիտական կոմունիզմի հիմնական դրույթները։

«Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» (1848 թ.) հանդիսացավ գիտական կոմունիզմի տեսության կարևորագույն փաստաթուղթը։ Նրանում առաջին անգամ սիստեմատիկաբար շարադրված են գիտական կոմունիզմի բոլոր հիմնական դրույթները։

Կապիտալիզմի զարգացման տնտեսական օրենքների գիտական վերլուծության հիման վրա Մարքսն ու Էնգելսը բացահայտում են այդ հասարակարգի խորտակման և սոցիալիզմի հաղթանակի անխուսափելիությունը։ Կյանքի կոչելով արտադրողական հզոր ուժեր, որոնց կապիտալիզմը հետզհետե ավելի ու ավելի անզոր է դառնում ենթարկել իրեն, «բուրժուազիան ոչ միայն իր համար մահաբեր զենք է կռել, այլև ծնունդ է տվել նաև այն մարդկանց, որոնք այդ զենքն ուղղելու են նրա դեմ,— ժամանակակից բանվորներին, պրոլետարներին»[20]։ Սա արդեն պրոլետարիատի պատմական դերի հիմնավորումն է, մի դասակարգի, որը կոչված է վերափոխելու աշխարհը։ «Մանիֆեստում» ցույց է տրված, թե ինչպես է իրականացվում այդ վերափոխումը, անցնելով դասակարգային պայքարի տարբեր փուլեր և ընդունելով տարբեր ձևեր։ Պրոլետարիատը համախմբվում է իր կուսակցության մեջ՝ քաղաքական պայքար մղելու համար, պայքար, որը պսակվում է հեղափոխությամբ. «Պրոլետարիատը բուրժուազիայի բռնի տապալման միջոցով հիմնում է իր տիրապետությունը»[21]։ Այնուհետև «պրոլետարիատն իր քաղաքական տիրապետությունը կօգտագործի նրա համար, որպեսզի բուրժուազիայից քայլ առ քայլ խլի ամբողջ կապիտալը,

18 Տե՛ս К. Маркс и Ф Энгельс, Сочинения, т. 3, էջ 74—75։

19 Նույն տեղում, էջ 71։

20 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, Երևան, 1960, էջ 41։

21 Նույն տեղում, էջ 49։

արտադրության բոլոր գործիքները կենտրոնացնի պետության, այսինքն՝ որպես տիրող դասակարգ կազմակերպված պրոլետարիատի ձեռքում և ըստ հնարավորին արագ մեծացնի արտադրողական ուժերի գումարը»[22]։

Սա պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարի պարզ ու որոշակի ձևակերպումն էր։

«Կոմունիստական կուսակցության մանիֆեստում» մշակված կարևորագույն հարցերից էր պրոլետարական, կոմունիստական կուսակցության հարցը։ Կոմունիստական կուսակցությունը բանվոր դասակարգի ավանգարդն է, նրա շահերի ամենահետևողական արտահայտիչն ու պաշտպանը։ Կոմունիստական կուսակցությունը դասակարգի առավել գիտակից մասն է, որովհետև նրա տեսական դրույթները հիմնված են ոչ թե «աշխարհը վերափոխողների» ինչ-որ մտացածին գաղափարների ու սկզբունքների, այլ հասարակական զարգացման օրինաչափությունների, բուրժուազիայի դեմ պրոլետարիատի մղած պայքարի գիտական իմացության վրա։ Մարքսն ու Էնգելսը վճռականորեն հանդես են գալիս աղանդավորության դեմ, հայտարարելով, որ կոմունիստները «չեն առաջադրում որևէ հատուկ սկզբունք, որին կուզենային հարմարեցնել պրոլետարական շարժումը»[23], որ «կոմունիստներն ամենուրեք պաշտպանում են ամեն մի հեղափոխական շարժում, որն ուղղված է գոյություն ունեցող հասարակական ու քաղաքական կարգերի դեմ»[24] և որ «կոմունիստներն ամենուրեք միավորման և համաձայնության են ձգտում բոլոր երկրների դեմոկրատական կուսակցությունների միջև»[25]։

Ամբողջ «Մանիֆեստի» միջով կարմիր թելի նման անցնում է կոմունիստական շարժման ինտերնացիոնալիզմի սկզբունքը։ Նրա եզրափակիչ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» բառերը դարձել են հեղափոխական պրոլետարիատի կյանքի ու գործունեության օրենքը։

Գիտական կոմունիզմի պրոբլեմների հետագա մշակումը կապված է 1848—50 և 1871 թթ. հեղափոխությունների ընթացքում պրոլետարիատի հեղափոխական պայքարի փորձի և խնդիրների հետ։ Այդ տարիներին զբաղվելով հիշյալ պրոբլեմներով, Մարքսն ու Էնգելսը գալիս են այն եզրակացության, որ ապագա հեղափոխության ընթացքում պրոլետարիատի ստրատեգիայի հիմնական գիծը պետք է լինի անընդհատ հեղափոխությունը, այսինքն՝ բուրժուադեմոկրատական հեղափոխության վերաճումը սոցիալիստականի, որը անհնար կլինի, եթե չիրականացվի պրոլետարիատի հեգեմոնիան հեղափոխության մեջ և նրա դաշինքը գյուղացիության հետ։

Հաղթական սոցիալիստական հեղափոխություն իրականացրած պրոլետարիատի առաջ անխուսափելիորեն կանգնում է այն հարցը, թե ինչպես պետք է վարվել գոյություն ունեցող բուրժուական պետական մեքենայի հետ, պետք է թողնե՞լ այն, թե՞ ոչնչացնել, իսկ եթե անհրաժեշտ է ոչնչացնել, ապա ինչո՞վ պետք է փոխարինել այն։ 1850-ական թթ. Մարքսն այդ հարցի պատասխանը դեռ չէր գտել, սակայն հետագա տասնամյակների ընթացքում, հատկապես

22 Նույն տեղում, էջ 61։

23 Նույն տեղում, էջ 50։ 1888 թ. անգլերեն հրատարակության մեջ «հատուկ» բառի փոխարեն ասված է «աղանդավորական»։

24 Նույն տեղում, էջ 79։

25 Նույն տեղում, էջ 80։

Փարիզյան Կոմունայից հետո, ուսումնասիրելով հեղափոխության փորձը, նա հայտնագործեց պրոլետարիատի դիկտատուրան՝ որպես հաղթանակած սոցիալիստական հեղափոխությունից հետո ստեղծվելիք պրոլետարական պետության ձև, Էնգելսի հետ համատեղ մշակելով պրոլետարիատի դիկտատուրայի պատմական դերի, խնդիրների, ներքին էվոլյուցիայի հետ կապված մի շարք կարևորագույն հարցերը։

Գիտական կոմունիզմի տեսության մշակման ընթացքում Մարքսը մեծագույն ուշադրություն է նվիրել կոմունիստական ֆորմացիայի ձևավորման ու ամրապնդման օրինաչափությունների հայտնաբերմանը։ Այս պրոբլեմը առավել խորությամբ նա քննարկում է «Գոթայի ծրագրի քննադատությունը» աշխատության մեջ։ Այստեղ ցույց է տրվում, որ մինչև իր լիակատար ամրապնդումը կոմունիստական ֆորմացիան անցնում է մի քանի՝ օբյեկտիվորեն անխուսափելի և օրինաչափ փուլերով։ Դրանցից առաջինը կապիտալիզմը հեղափոխական ճանապարհով վերացնելու և կոմունիստական ֆորմացիայի հիմքերը դնելու փուլն է, երկրորդը կոմունիզմի ստորին փուլն է կամ սոցիալիզմը, իսկ երրորդը՝ կոմունիզմի բարձրագույն փուլը, որը զարգանում է իր սեփական հիմքի վրա և ոչ թե դուրս է դալիս հին հասարակարգի ընդերքից, ինչպես նախորդ փուլը, և դրա շնորհիվ դերծ է նախորդի թերություններից։ Զարգացման իր այս բարձրագույն փուլում կոմունիստական հասարակարգը վերջնականապես հաղթահարում է մարդու ստրկացումը աշխատանքի կողմից՝ աշխատանքը վերածելով առաջին կենսական անհրաժեշտության, աշխատավորներին տալիս է բազմակողմանի զարգացման լիակատար հնարավորություն, արտադրողական ուժերը հասցնում է զարգացման այնպիսի աստիճանի, որն ապահովում է նյութական բարիքների առատությունը և հնարավորություն է ընձեռում իրականացնել ըստ պահանջմունքների բաշխման սկզբունքը, այսինքն՝ տնտեսական ու սոցիալական լիակատար հավասարությունը։

Կոմունիզմը Մարքսի կողմից բնորոշվում է որպես մի հասարակարգ, որն ապահովում է մարդկանց իրական ազատությունն ու հավասարությունը։ Մարքսը ցույց է տալիս, որ կոմունիստական հասարակարգը, ամեն կերպ զարգացնելով իր արտադրողական ուժերը և ընդլայնելով իշխանությունը բնական անհրաժեշտության նկատմամբ, կրճատում է այն ժամանակամիջոցը, որը պահանջվում է արտադրության համար և երկարացնում աշխատավորների զարգացման գործին նվիրվող ազատ ժամանակահատվածը։ Հենց այստեղ, անհրաժեշտ ժամանակից այն կողմ է, որ սկսվում է իսկական ազատության թագավորությունը, ասում է Մարքսը, քանի որ ազատ ժամանակի ընթացքում է արտադրվում կոմունիստական ֆորմացիայի կապիտալներից ամենակարևորը՝ բազմակողմանիորեն զարգացած աշխատավոր մարդը։

Այստեղ իր պայծառ արտահայտությունն է գտնում մարքսիզմի բարձր հումանիզմը, որի նպատակն է անձի ազատությունը, նրա բազմակողմանի զարգացումը, հասարակության և անհատի շահերի ներդաշնակումը, հասարակության բոլոր անդամների իսկական սոցիալական հավասարության իրականացումը։ Կոմունիստական հավասարությունը դասակարգային և սոցիալական տարբերությունների ոչնչացումն է, ամենքի համար հավասար հնարավորությունների ստեղծումն է՝ իրենց անհավասար ունակությունները լիակատար չափով զարգացնելու և իրենց նույնքան անհավասար պահանջմունքները լիովին բավարարելու համար։ Կոմունիստական հավասարությունը հնարավո-

ությունների հավասարություն է, սակայն ոչ թե անհատականությունների համահարթում, այլ դրանց բազմակողմանի ու խորը զարգացում։

* * *

Մարքսի ու Էնգելսի հեղափոխական ուսմունքն իր բոլոր կողմերով զարգացրեց ու հարստացրեց նրանց գործի մեծ շարունակող Վ. Ի. Լենինը։

Լենինիզմը մարքսիզմի նոր, բարձրագույն փուլն է, նրա ստեղծագործական զարգացումը պատմական նոր պայմաններում՝ իմպերիալիզմի ու պրոլետարական հեղափոխությունների, կապիտալիզմից սոցիալիզմին ու կոմունիզմին անցնելու պայմաններում։ Որպես մարքսիզմի ժառանգորդ, լենինիզմը դարձավ պրոլետարիատի հեղափոխական հաղթանակների տեսական հիմքը, իսկ Լենինը՝ պատմության մեջ առաջին հաղթական սոցիալիստական հեղափոխության առաջնորդն ու այդ հեղափոխության շնորհիվ ստեղծված առաջին պրոլետարական պետության ղեկավարը։ Մեր օրերում մարքսիզմի լենինյան փուլը իր հետագա զարգացումն է ստանում ՍՄԿԿ և եղբայրական մյուս մարքս-լենինյան կուսակցությունների ծրագրային փաստաթղթերում, աշխարհի բոլոր մարքսիստ-լենինյանների կոլեկտիվ ստեղծագործության մեջ։